ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ք. Երևան «11» հոկտեմբերի 2024թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 224-Ա/Ք

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ «ԹԵԺ ԳԻԾ» ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հուլիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 28-Լ հրամանով հաստատված հավելվածի 18-րդ կետի 7-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հաստատել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեում «Թեժ գիծ» հեռախոսակապի աշխատանքների իրականացման կարգը՝ համաձայն Հավելվածի:

2. «Թեժ գիծ» հեռախոսակապի աշխատանքների իրականացումը հանձնարարել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հանրային կապերի և տեղեկատվության բաժնին:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարին:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ

Հավելված
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի
2024 թվականի հոկտեմբերի 11-ի № 224-Ա/Ք հրամանի

ԿԱՐԳ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ «ԹԵԺ ԳԻԾ» ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊԻ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) պաշտոնական «Թեժ գիծ» հեռախոսակապի աշխատանքների կազմակերպման գործընթացի իրավակարգավորումները:
2. Կոմիտեի պաշտոնական «Թեժ գիծ» հեռախոսակապի աշխատանքների իրականացումը կազմակերպվում է Կոմիտեի հանրային կապերի և տեղեկատվության բաժնի միջոցով:
3. Հանրային կապերի և տեղեկատվության բաժինը.

1) հրապարակում է սույն կարգը Կոմիտեի պաշտոնական կայքում.
2) իրականացնում է «Թեժ գիծ» հեռախոսակապով ստացված զանգերի ընդունում, հաշվառում՝ ըստ քանակի և տեսակի (բողոք, առաջարկություն, տեղեկության հարցում, խորհրդատվության տրամադրում), անհրաժեշտության դեպքում նաև՝ վերլուծական հաշվետվությունների կազմում և հրապարակում.
3) անմիջապես կամ հնարավորինս սեղմ ժամկետում քաղաքացուն տրամադրում է բանավոր պարզաբանում՝ բարձրացված հարցի վերաբերյալ տեղեկությունները օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինելու դեպքում,
4) հեռախոսազանգը վերահասցեագրում է Կոմիտեի համապատասխան մասնագիտական ստորաբաժանում՝ մասնագիտական խորհրդատվության տրամադրման անհրաժեշտության դեպքում,
5) քաղաքացուն ուղղորդում է գրավոր դիմում ներկայացնել Կոմիտե՝ բողոքի, առաջարկության կամ հարցման հավելյալ մշակման և ուսումնասիրության կարիք առաջանալու դեպքում.
6) հանցագործության մասին հաղորդում պարունակող ահազանգերի դեպքում՝ ուղղորդում է քաղաքացիներին դիմել իրավապահ մարմիններ.
7) Կոմիտեի իրավասության շրջանակներին չվերաբերող հարցերով «Թեժ գիծ» զանգահարած քաղաքացիներին, հնարավորության դեպքում, ուղղորդում է դիմել համապատասխան պետական մարմին.

8) «Թեժ գիծ» հեռախոսակապով հաճախ ստացված հարցերի վերլուծության հիման վրա պարբերաբար թարմացնում է Կոմիտեի պաշտոնական կայքի «Հաճախ տրվող հարցեր» բաժինը կամ, անհրաժեշտության դեպքում, մշակում և հրապարակում պաշտոնական պարզաբանումներ, մեկնաբանություններ և հայտարարություններ: